ՄՈՆՏՈԼՈԳԻԱՅԻ ԱՅԲՈՒԲԵՆԸ*

«Կարող ես տղային հանել լեռներից,
բայց երբեք չես կարող լեռները հանել տղայից»:
Հին իռլանդական ասացվածք

Ամփոփում

Ներկա հրապարակումը Հայաստանի անվտանգությանը սպառնացող մարտահրավերները մոնտոլոգիական հետազոտության ենթարկելու առաջին փորձն է: Համառոտ պատմական ակնարկի միջոցով ցույց է տրվում, որ անկախ պետականության կորստից հետո Հայկական լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկություններն օգտագործելն է ապահովել հայրենի հողի վրա համահավաք գոյության օջախների պահպանումը: Ապացուցվում է, որ լեռներում հաստատված հայության մարտունակ ու դիմադրունակ հատվածներն են դարձել նոր ու նորագույն ժամանակների հայ ազատամարտի առանցքային դերակատարները, իսկ հետագայում էլ ապահովել են հայոց պետականությունը վերականգնելու խնդրի ռազմական լուծումները:

Հայ լեռնականի առանձնահատուկ պատմական առաքելության բացահայտման միջոցով հրապարակումը կարևորում է արևմտյան մի շարք զարգացած երկրների լեռնային շրջանների ֆիզիկաաշխարհագրական, ընկերային-տնտեսական ու հոգևոր-մշակութային բնութագրերի լայն ընկալման վրա հիմնված մոնտոլոգիա (լեռնագիտություն կամ լեռնաբանություն) գիտակարգի ճանաչողական հնարավորությունների և գործիքների կիրառության խնդիրը: Այդ գիտական ձեռքբերումները աշխատանքի լայն դաշտ են բացում նաև Հայաստանի գիտնականների համար, քանզի մոնտոլոգիական հետազոտությունների արդյունքների օգտագործումը մեզ թույլ է տալու Հայաստանի սահմանամերձ լեռնային շրջանները դարձնելու երկրի ռազմական անվտանգությունն ամրապնդող և

ՎԷՄ համահայկական հանդես, ԺԸ (ԽԴ) տարի, թիվ 1(93), հունվար-մարտ, 2026

տնտեսական ու էկոլոգիական մարտահրավերները հաղթահարող ամուր պատնեշներ: Դրա համար մեր բնաշխարհագրական միջավայրի ֆիզի-կաաշխարհագրական առանձնահատկությունները, նրանում տնտեսական գործունեություն ծավալելու հնարավորությունները և լեռնականների յուրահատուկ հոգևոր-մշակութային միջավայրը հարկավոր է դիտարկել մեկ ամբողջություն: Նման համադրական, այսինքն՝ մոնտոլոգիական մոտեցումը Հայաստանի անվտանգ գոյատևումն ապահովելու և լեռնային շրջանները զարգացնելու նախապայմանն է:

Բանալի բառեր – մոնտոլոգիա, Հայկական լեռնաշխարհ, աշխարհագրական դետերմինիզմ, քաղաքական էկոլոգիա, ջուր, հայ լեռնական:

THE ALPHABET OF MONTLOGY

Abstract

This publication represents the first attempt to examine the new challenges threatening Armenia's security through the lens of montological research. It is shown that after the loss of statehood, the use of the physical and geographical features of the Armenian Highland ensured the preservation of centers of collective Armenian existence on their հայրենի land.

Through a critical analysis of historical experience, it is demonstrated that the most combat-ready and resilient segments of Armenians who settled in the mountains became the key actors of the Armenian liberation struggle in the modern and contemporary periods, and later also ensured military solutions for the restoration of Armenian statehood.

On this basis, the importance is emphasized of applying the new cognitive horizons and tools of montology (mountain science), which in recent decades has been developed in a number of advanced countries based on a broader understanding of the physical-geographical, socio-economic, and spiritual-cultural characteristics of mountainous regions.

These scientific achievements open a wide field of work for scholars in Armenia—the country of mountains—as the application of montological research results will allow transforming Armenia's border mountainous regions into an impregnable barrier for ensuring national security, as well as preventing economic and ecological challenges.

For this purpose, it is necessary to consider the physical-geographical characteristics of the country's natural environment, the possibilities for economic activity within it, and the unique spiritual-cultural environment of mountain dwellers as a unified whole. This is a prerequisite for ensuring Armenia's security and for the development of its mountainous regions.

Key words - montology, Armenian Highland, geographical determinism, political ecology, water, Armenian highlander, resilience

АЗБУКА МОНТОЛОГИИ

Аннотация

Настоящая публикация представляет собой первую попытку подвергнуть монтологическому исследованию вызовы, угрожающие безопасности Армении. В ней посредством краткого исторического обзора показано, что после утраты государственности именно использование физико-географических особенностей Армянского нагорья обеспечило сохранение крупных очагов компактного существования армян на родной земле. Доказывается, что закрепившиеся в горных регионах, боеспособные и устойчивые сегменты армянства стали ключевыми участниками национально-освободительной борьбы в новое и новейшее время, а впоследствии обеспечили военное решение задачи восстановления армянской государственности.

Раскрывая особую историческую миссию армянских горцев, публикация подчёркивает значимость использования познавательных возможностей и инструментов активно развиваемой в последние десятилетия в ряде развитых стран междисциплинарной науки монтология (наука о горах), основанной на широком понимании физико-географических, социально-экономических и духовно-культурных характеристик горных регионов. Данные научные достижения открывают широкое поле деятельности и для учёных Армении как горной страны, поскольку применение результатов монтологических исследований позволит превратить приграничные горные регионы Армении в прочные опорные зоны, укрепляющие военную безопасность страны и способные противостоять экономическим и экологическим вызовам.

Для этого необходимо рассматривать физико-географические особенности природной среды, возможности развития хозяйственной деятельности и специфическую духовно-культурную среду горских сообществ как единое целое. Подобный комплексный, т.е. монтологический подход является не-

обходимым условием обеспечения безопасного существования Армении и устойчивого развития её горных регионов.

Ключевые слова: монтология, Армянское нагорье, географический детерминизм, политическая экология, вода, армянский горец.

Մուտք

Վերջին տասնամյակներում մի շարք զարգացած երկրներում հատուկ ուշադրություն է դարձվում լեռնային շրջանների ֆիզիկաաշխարհագրական, ընկերային-տնտեսական ու հոգևոր-մշակութային բնութագրերի լայն ընկալման վրա հիմնված **մոնտոլոգիա** (լատ. *mons-montis*-լեռներ և *logos*-խոսք, բան, բառացիորեն՝ **լեռնագիտություն** կամ **լեռնաբանություն**) գիտակարգին, որը ձևավորվել է լեռների մասին տարբեր գիտությունների արդյունքների համադրության միջոցով:

Գիտակարգի **մոնտոլոգիա** անվանումն առաջին անգամ կիրառվել է 1974 թվականին Մյունխենում կայացած համաժողովում, հիմնադիրներն են կանադացի գիտնական **Ջեք Դ. Այվզն** (Jack D. Ives) ու շվեյցարացի **Բրունո Մեսերլին** (Bruno Messerli): Նրանց նպատակն էր լեռնային երկրների աշխարհագրական առանձնահատկությունների և լեռներում մարդու կողմից ձևավորված սոցիալ-տնտեսական ու մշակութային իրողությունների հաշվառումով մշակել լեռնային լանդշաֆտի բարելավման հայեցակարգեր: Մոնտոլոգիական ուսումնասիրություններն իրականացվում են նաև Արևելյան Եվրոպայի (Հունգարիա, Ռումինիա) և հետխորհրդային տարածքի երկրներում: Գիտակարգի թերևս լավագույն սահմանումն առկա է **Մոնտոլոգիայի մանիֆեստի** հեղինակ **Ֆաուստո Օ. Սարիմենտոյի** (Fausto O. Sarmiento, Ջորջիայի համալսարան) հետևյալ տողերում «Մոնտոլոգիան՝ որպես լեռների մասին միջառարկայական գիտություն, հիմնված է մի քանի առարկաների վրա, ինչպիսիք են քննական աշխարհագրությունը, էթնոգեոմոր-

ֆոլոգիան[1], տարածաշրջանային ուսումնասիրությունները և քաղաքական էկոլոգիան[2], միաժամանակ նպատակ ունենալով իրականացնել գիտության վրա հիմնված լուծումներ կայուն և վերականգնողական լեռնային զարգացման համար»[3] **(Sarmiento, 2022**): Ըստ այդմ՝ լեռնային լանդշաֆտը համարվում է երեք գործոնների խտացված և համակցված արտահայտություն՝ լեռների ֆիզիկական կառույց, սոցիալ-էկոլոգիական համակարգեր և հոգևոր ու առասպելական պատկերացումներ:

Որպեսզի հասկանանք, թե ինչ է մեզ տալու լեռների ու նրանց բնակիչների վերաբերյալ գիտելիքների ընդհանուր շրջանակ ձևավորող մոնտոլոգիան, պարտավոր ենք հետահայաց քննության ենթարկելու Հայկական լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկությունների վրա հիմնված ընկերային-տնտեսական հարաբերությունների ու հոգևոր-մշակութային պատկերացումների դերը հայոց պատմության մեջ: Հայոց պատմության մասին առանձին աշխատությունների ներածական բաժիններում մինչ օրս Հայկական լեռնաշխարհն ու նրան բնորոշ բնաշխարհագրական իրողությունները դիտարկվել են սոսկ Հայաստանի ու հայության ճակատագրի վրա միակողմանի ազդեցություն գործած միջավայրի անփոփոխ հիմքեր: Նման պարզունակ մոտեցումը պատմության շարժիչ ուժերի համակարգում **աշխարհագրական դետերմինիզմը** (պատճառականություն) միակողմանիորեն ընկալելու հետևանքն է, որով անտեսվել է **մարդ և միջավայր շարքերի** հայկական ընկալման յուրահատկությունը, ըստ որի՝ «Մէկն առանց միւսի՝ անմտածելի է եւ անհասկանալի» (Ֆրանգեան Ե., էջ 37),

Հայկական լեռնաշխարհը, ժամանակի ընթացքում փոխվել է հայերի հաջորդական սերունդների տնտեսական գործունեության և արտաքին նվաճողների ավերիչ թափանցումների պատճառով: Փոխվել են ինչպես նրա նախնական ֆլորան ու ֆաունան, այնպես էլ դրանց վրա հիմնվող մեր պատկերացումների համակարգը: Ուստի այսօր մեզ շրջապատող միջավայրի մասին գրքային-պատմական ու տեսողա-

[1] **Էթնոգեոմորֆոլոգիան** ուսումնասիրում է երկրի մակերևույթի ձևերի ու երկրաձևաբանական գործընթացների ավանդական ընկալումները, ուստիև կամուրջի դեր է խաղում գեոմորֆոլոգիայի և տեղական (ավանդական) գիտելիքների միջև:

[2] Հատնի է նաև «**էկոլոգիական քաղաքագիտություն**» անվանումով և հիմնականում զբաղվում է էկոլոգիական անվտանգության հետ կապված խնդիրներով:

կան-ֆիզիկական պատկերացումների միջև հսկայական տարբերություն կա: Առաջին առումով՝ ժամանակի ընթացքում հայերի կողմից Հայկական լեռնաշխարհը սրբազնագործվել ու վերածվել է ինքնութենական իմաստ ունեցող նյութական ու հոգևոր արժեքները բնութագրող հասկացությունների հերթագայության դիաքրոնիկ ամբողջության: Ավելին՝ դրանց առանձին բաղադրիչները խոր հետք են թողել ոչ միայն հայկական մշակույթի, այլև անգամ համաշխարհային քաղաքակրթության վրա: Դրա հետևանքով մեզանում պատմու- թյամբ ու մշակույթով շնչավորված ազգային խորհրդանիշների քննու- թյունը աշխարհագրական դետերմինիզմի ոլորտից տեղափոխվել է փիլիսոփայական, մշակութաբանական և անգամ քաղաքակրթական չափույթներով սահմանվող գիտակագերի հարթություն (Բարխուդարյան Վլադիմիր, (Խմբ.), (2005):

Սակայն **երկրորդ առումով՝** Հայկական լեռնաշխարհում ծավալվել են ճիշտ հակառակ գործընթացներ, որոնք շարունակվում են նաև մեր օրերում: Արդեն միջնադարում առևտրական ճանապարհների փոփոխության և արտաքին նվաճումների պատճառով Հայկական լեռնաշխարհի վրա դրված հայկական կնիքը աղճատվել է: Դա հանգեցրել է հայերի կենսագործունեության հիմքերի խարխլմանը՝ պայմաններ ստեղծելով արտագաղթի համար: Քոչվորական ցեղերի հաջորդական ալիքների բերած ոչխարների հոտերի կողմից ոչնչացվել է Հայկական լեռնաշխարհի ճոխ բուսականութունը, իսկ առևտրական ճանապարհները դարձել են ծուղակներ ոչ մեծ ավազակախմբերի համար: Հետագայում ռազմական նպատակներով կառուցված ճանապարհները ավերել են նաև մեր դարավոր հուշարձաններն ու գերեզմանատները: Ուստի արդեն նոր ժամանակներում մեր երկրի ամայացումը հասել էր այն կրիտիկական սահմանագծին, որ 1918-ին մեզ մնացած փոքրիկ հողակտորը թուրք փաշաների կողմից դիտարկվում էր իբրև **հայկական արգելոց (ռեզերվացիա)**, որը կարող է հայերի ընդարձակ գերեզմանատուն ծառայել: Բայց քանի որ ապրելու համար անպիտան թվացող այդ հողատարածքը մեկ դար անց ընդարձակվել ու բարեկարգվել է, մեր երկրի վերանկախացումից հետո փոխվել են նաև Հայաստանի բնաաշխարհագրական միջավայրի վրա ներազդելու ձևերն ու եղանակները: Ուստի «հայկական արգելոցի» շրջափակումը պահպանելու հետ միասին՝ սկիզբ է առել նաև հայերի վերջին օջախը քանդելու համակարգված պետական քաղաքականութունը, ո-

րում զենքի փոխարեն գործի են դրվում ագրեսիայի շատ ավելի նուրբ գործիքներ: Ակնհայտ է, որ թուրք փաշաների սև գործի նորօրյա ժառանգները մշակել են մեզ մնացած փոքրիկ արգելոցի ջրային պաշարները (Արաքս, Սևան և այլն) զավթելու, ինչպես նաև դրանք սնուցող առանձին լեռնաշղթաներն ու հաղորդուղիները վերահսկելու ծրագրեր: Մինչդեռ ցեղասպանի հետևողականությունից զարմանալու փոխարեն պետք է տեղյակ լինեինք, որ մոնտոլոգիայի մաս կազմող **քաղաքական էկոլոգիան** Թուրքիայի ցեղասպանական քաղաքականության գործիքներից մեկն է: Հայկական լեռնաշխարհի հարավում ջրամբարներ կառուցելու միջոցով այդ «էկոլոգիական զենքը» կարծես թե վճռել է սկզբում ջրազուրկ արված, իսկ հետո փաստացի կերպով զավթված Սիրիայի ճակատագիրը: Այստեղ բնաշխարհագրական միջավայրի առավելությունները՝ ավելի բարձր տեղանքը և դրանով պայմանավորված՝ հիմնական բնական ռեսուրս **ջուրը**, հաջողությամբ օգտագործվել են որպես թուրքական ագրեսիայի գործիքներ, որոնց հակազդելու համար փաստորեն բացակայել է արաբների դիմադրական ոգին:

Բարեբախտաբար, շրջակա միջավարի հայկական ընկալումը սկզբունքորեն տարբերվում է ոչ միայն Արաբական աշխարհին բնորոշ պատկերացումներից, այլև աշխարհագրական պատճառականության դասական (եվրոպական) ընկալումից: Մենք ունենք աշխարհագրական միջավայրի ճիշտ օգտագործման միջոցով այն մեր գոյատևելու ամուր կռվանի վերածելու հարուստ փորձ, որը, դժբախտաբար, ոչ միշտ է ընկալվել հայ պատմագիտության կողմից: Նման փորձի առկայությունը մեզ ակնհայտ է դարձել Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան աղեղնաձև լեռնագոտում (Սյունիք–Արցախ–Գարդման–Տավուշ–Լոռի) 18–րդ դարում ծավալված անօրինակ գոյամարտերի մասին Ռաֆֆու, Լեոյի և այլ մեծերի աշխատությունները՝ սեփական տոհմական հիշողություններում արձանագրված միկրոպատմությունների հետ համեմատելիս (Խուդինան Գ Ս, էջ 131–150): Դրանք մեզ բերել են այն հայեցակարգային եզրահանգմանը, որ պետականության կորստից ու քոչվորական ցեղերի զանգվածային թափանցումներից հետո, հայրենի հողի վրա **ֆիզիկապես**, այսինքն՝ ***ժողովրդագրորեն***, ուրեմն և **քաղաքականապես** պահպանել ենք մեր համահավաք գոյության օջախները հիմնականում դժվարանցանելի լեռնագավառներում ապաստանած լեռնական հայերի յուրահատուկ կենսակերպի

շնորհիվ: Անշուշտ, չենք վիճարկում, որ հոգեպես հայ ենք մնացել եկեղեցու ու մշակույթի շնորհիվ, բայց արդյոք դա բավարա՞ր կռվան էր քաղաքական ազգի վերածելու համար, եթե նոր ժամանակների մեր պատմության էջերը չզարդարեին Սասունը, Սյունիքը, Արցախը, Լոռին և Արևմտյան ու Արևելյան Հայաստանի այլ լեռնագավառները: Նրանցում ապաստանելու շնորհիվ՝ հայրենի հողին կառչած լեռնական հայերի յուրահատուկ կենսակերպն է ապահովել զավթված ու ստրկացած երկրի վերապրելու հնարավորությունը: Որովհետև ի տարբերություն բռնագաղթի ենթարկված կամ ստրկացված մեծամասնության՝ Հայկական լեռնաշխարհի բնաշխարհագրական առանձնահատկություններն օգտագործած լեռնական հայությունը մշակել է նաև իր միջավայրին համապատասխանող տնտեսական գործունեության ձևեր ու եղանակներ: Զավթված կամ՝ վտանգված դաշտավայրերի փոխարեն նա անցել է **յայլաղային անասնապահությունը՝ դարավանդային այգեգործության** հետ զուգորդելու մոնտոլոգիական կենսակերպին: Ավելին՝ Հայկական լեռնաշխարհի դժվարանցանելի լեռնաշղթաների միջև ընկած ընդարձակ սարահարթերում է պահպանվել մեր մարտունակ տեսակը՝ **լեռնական հայը:** Վերջին տարիների ծագումնաբանական հետազոտությունները ցույց են տվել, որ Հայկական լեռնաշխարհի լեռնային տեղանքում կղզիանալով ու ներփակվելով է հայությունը պահպանել իր նախնական մարդաբանական տիպն ու բնավորության առանձնահատկությունները:

Ավելին, եթե արտագաղթի ու ստրկացման հաջորդական ալիքները Հայաստանի քաղաքներում ու հովիտներում մնացած հայության ստվար զանգվածներին պարտադրել են կամազուրկ ռայայի (ստրուկի) հոգեբանությունը, ապա «թուրքի ահից» լեռներում պատսպարված հայության մոտ օտար տարրի ազդեցությունը շատ ավելի թույլ, անգամ հպանցիկ է եղել: Լեռնական հայերը իրենց վայելած համեմատական ազատության պայմաններում յուրացրել են անգամ նվաճողների պարտադրած բիրտ ու դաժան կենցաղը ու տիրապետելով զենքին՝ դարձել են **իգիթներ** ու **դաչաղներ** և անընդհատ պատուհասել են զավթիչներին: Ուստի անգամ այսօր ենք արձանագրում, որ հայրենաբնակ հայության հիմնական զանգվածի՝ պետությունից ու հավաքական շահից **օտարման** երևույթը մեծ տարածում ունի հենց հարթավայրային տեղանքին հարմարվածների շրջանում: Մինչդեռ լեռնականների կղզիացած համայնքները ժամանակի ընթացքում ստեղծել

են **տեղական հայրենասիրությամբ** ամրակայված այն հոգեբանական տիպը, որը պահպանել է նախնական հայի պատվախնդրությունը, որ արտահայտվել է սասունցիների՝ **ծռության**, կամ արցախցիների **թասիբի** տեսքով: Լեռնական հայութան այս պատմական տիպը անվտանգային միջավայրի վատթարացման պայմաններում որդեգրել է մի լեռնաշխարհից մյուսին անցնելու՝ **ժողովրդագրական շրջապտույտների** մեթոդաբանությունը:

Արդեն 15–16–րդ դարերում քոչվորների՝ Սյունիք թափանցելու պատճառով մեծ արտահոսքեր են եղել դեպի Լոռի ու Վրաստանի կազմում հայտնված այլ գավառներ: Բայց քանի որ 17–րդ դարի սկզբների շահաբասյան «մեծ սուրգունը» ավերել է նաև Լոռու զգալի մասը, նրա մելիքների ու ժողովրդի մի հատվածը քիչ անց փրկություն է գտել Հարավային Արցախում՝ հիմք դնելով Դիզակի Եգանյանների մելիքական տոհմին: Դրան հաջորդել են 18–րդ դարի 20–ական թվականների անօրինակ հերոսամարտերը, որոնց հիմքը դրած Դավիթ Բեկի՝ Սյունիք անցած զորաբանակի աչքի ընկնող դեմքերի զգալի մասը Հյուսիսային Հայաստանից սերող զինվորականներն էին՝ Մխիթար սպարապետի գլխավորությամբ: Ուստի պատահական չէր, որ վերջինիս սպանությունից հետո այդ զինվորականները ապաստանել են «Գուգարաց իշխանի» մոտ (Սեբաստացի Ղուկաս, 76–77):

*Սեփական արժանապատվության գիտակցումից ծնված **ազատության կայծերն** ամբարելու փաստը դրսևորվել է նաև Արևմտյան Հայաստանում՝ Սասունում, Շատախում ու այլ լեռնագավառներում և, անշուշտ, Հայկական Կիլիկիայում, որի լեռները ժամանակին ապաստան էին տվել քաղաքամայր Անիից և անգամ հեռավոր Արցախից սերող Զեյթունի կամ Սուեդիայի ըմբոստ հայությանը:*

Նույնիսկ համազգային միասնության դրոշը պարզած հայ ազատամարտը մինչև վերջ չի կարողացել հաղթահարել դիմադրունակ լեռնականների ու դաշտավայրերի հայության էական տարբերությունները, ուստի քննախույզ հայացքով դիտարկելու պարագայում պատահական չպետք է համարել այն իրողությունը, որ Հայաստանի Հանրապետության հիմքերը դրած 1918 թ. Մայիսյան հերոսամարտերում որպես մահապարտներ կռվող, այսինքն՝ իրենց կյանքի գնով պատերազմի ընթացքը փոխող երեք նահատակները (Ղարաքիլիսայում՝ **Գուրգեն Տեր–Մովսիսյան**, Բաշ–Ապարանում՝ **Հարություն Նանումյան (Զեմլյակ)**, Սար-

դարապատում՝ **Վարդան Ջաղինյան**, համապատասխանաբար՝ Արևելյան Հայաստանի երեք հիմնական լեռնագավառների՝ **Սյունիք**, **Արցախ** և **Լոռի**, զավակներ են եղել[4]:

Համոզված լինելով, որ նման ճակատագրական պահերին պատահականություններ չեն լինում, գոնե դրանից հետո մեզ թվում էր, թե պետականության բացակայության պայմաններում ձևավորված այս հստակ օրինաչափությունը ժամանակի ընթացքում հաղթահարվել է: Ի վերջո, Խորհրդային Հայաստանում տեղի է ունեցել հայության տարբեր հատվածների միախառնումը՝ քաղաքային կենցաղի տարածման ու լեռնային շրջանների բնակչության տեսակարար կշռի նվազման միջոցով: Սակայն Արցախյան գոյամարտը ցույց տվեց, որ ոչ մեծ բացառություններով հանդերձ՝ մեր մահապարտ-հերոսների ճնշող մեծամասնությունը ճիշտ նույն լեռնագավառներից՝ Արցախից, Սյունիքից կամ Սասունից սերողների առաջին, երկրորդ կամ երրորդ սերունդներն էին (Բեկոր, Վուրգ, Դուշման, Կարոտ, Պետո, և այլն, և այլն): Ուրեմն հայերիս մոտ լեռնականի ոգին չի մարել, այլ փոքր-ինչ թուլացել է, ինչը Արցախի կորստից հետո դժվարացնում է մեր մարտական որակների վերականգնումը: Ուստի նրա լուծումը պահանջում է ոչ միայն նորագույն զենքերի հայթայթում, այլև դրանց օգտագործման համար անհրաժեշտ այնպիսի միկրոմիջավայրերի ձևավորում, երբ լեռն ու լեռնականը կրկին միաձուլվում են իրար: Իսկ նման պայմաններում գործելու փորձ ու հմտություններ ձեռք բերելու համար զգացվում է լեռնային պայմաններում որոշակի պաշտպանական ռազմավարության (Mountain Warfare) կարիքը: Դա լեռնային բարդ ռելիեֆի օգտագործման վրա հիմնվող մարտական գործողությունների տեսակ է, որը թույլ է տալիս պաշտպանելով առանցքային նշանակություն ունեցող դիրքերը՝ չեզոքացնել հակառակորդի քանակական առավելությունները:

Հայաստանի ֆիզիկական աշխարհագրության, տնտեսական զարգացման առանձնահատկությունների ու լեռնականների ինքնատիպ հասարակության մոնտոլոգիական ուսումնասիրությունները ներկայումս խիստ կարևոր են նաև մեր տնտեսական խնդիրների լուծման համար: Ուրեմն առանց լեռնային լանդշաֆտի ֆիզիկա-աշխարհագրական ու տնտեսական բնութագրերի և դրանց համապատասխանող

[4] Բացառություն չէր նաև **Դրաստամատ Կանայանը,** որի արմատները նույնպես Սյունյաց աշխարհ են տանում:

լեռնականներին բնորոշ կենսակերպի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների հաշվառման, հնարավոր չէ լուծել մեր **դիմադրողականության** ռազմական, սոցիալ-տնտեսական ու հոգևոր-մշակութային բաղադրիչների միավորման խնդիրը: Դրանց մոնտոլոգիական, այսինքն՝ համադրական ընկալման վրա հիմնված քաղաքական ռազմավարությունների մշակումը թույլ կտա ամրացնել մեր արտաքին սահմանները, վերստեղծել տնտեսական գործունեության այն օղակները, որոնք ապահովում են լեռնագավառների բնակչության ինքնուրույն կենսագործունեությունը և վերականգնել հայ լեռնականի առինքնող կերպարը:

Զարգացման խնդիրներ լուծող արդի հայ հասարակության համար արտաքուստ լեռնային ուտոպիա թվացող նման մոտեցումն իրականում կարող է դառնալ պրոգրեսի հակասականությունը հաղթահարելու **հայկական բանաձևը**, քանզի իրական զարգացումը հնարավոր է միայն ներդաշնակ հասարակության առկայության պարագայում: Իսկ ցանկացած ներդաշնակության ընկերային-տնտեսական կամ հոգևոր-մշակութային բնութագրիչները լեռնային միջավայրերում բեկվում են նրանց ռելիեֆային պատկերի մեջ, այսինքն՝ այն, ինչը ներդաշնակ է համարվում քաղաքային միջավայրում, չի կարող մեխանիկորեն տեղափոխվել լեռնային գյուղեր: Բայց նման տարբերությունների հաշվառման միջոցով համապատասխան պետական քաղաքականության մշակման միջազգային փորձը ոչ թե մեխանիկական ընկալման, այլ հայաստանյան իրողությունների **մոնտոլոգիական ուսումնասիրության** վրա հիմնվող դեղատոմսերի մշակման կարիք ունի:

Մեզ մոտ մարդու և բնության ներդաշնակությունն ապահովող ռելիեֆային իրողություններն այնքան շատ են, որ դրանք վաղուց արդեն միաձուլվել են հոգևոր ու մշակութային իմաստներ պարունակող բազմաթիվ հասկացությունների և անգամ բանավոր էպոսի հետ, որը պահպանվել է հենց ներփակ-լեռնային միջավայրերում: Ուստի մոնտոլոգիայի այբուբենը յուրացնելուց հետո մեր յուրաքանչյուր լեռնագավառում կարելի է հայտնաբերել ազգային ամուր հիշողության մի ամբողջ միկրոտիեզերք՝ իր **բնությամբ**, **տեղանուններով**, **զբաղմունքով**, **սովորույթներով**, **ապրելակերպով**, **բանահյուսությամբ**, որոնց հանրագումարը ազգի հավերժությունը խորհրդանշող մի փոքրիկ **Լեռնահայաստանի** պատկեր է:

Ուրեմն մոնտոլոգիայի այբուբենին տիրապետելու միջոցով հայոց լեռների բնաաշխարհագրական միջավայրի, տնտեսական գործունեության, ու լեռնականների հասարակությանը բնորոշ հոգևոր արժեքների ներդաշնակության պահպանումն ու հարստացումն է մեր երկրի անվտանգ գոյատևման և կայուն զարգացման առաջնային պայմանը:

Խմբ.

Օգտագործված գրականություն

1. Աստվածաշնչական Հայաստան, խմբ Բարխուդարյան Վլադիմիր, Երևան, Նոյյան Տապան, 2005:
2. Խուդինյան Գ.Ս.,Արցախահայության մասնակցութունը 18-րդ դարի վերջերին – 19-րդ դարի սկզբներին Լոռիում ծավալված ինքնապաշտպանական մարտերին՝ ըստ հայկական և օտար աղբյուրների, «Արցախի պատմության հիմնահարցերը ըստ սկզբնաղբյուրների և պատմագիտական գրականության», հոդվածների ժողովածու, Երևան, 2025, էջ 131-150:
3. Սեբաստացի Ղուկաս, Դավիթ Բեկ կամ պատմութիւն Ղափանցւոց, Երևան, 1992, էջ 76–77
4. Fausto O. Sarmiento Montology manifesto: echoes towards a transdisciplinary science of mountains: https://andesdelsurlab.cl/wp-content/uploads/2022/06/Sarmiento-Montology.pdf
5. Ֆրանգեան Ե., Մեր փիլիսոփայական աշխարհայեացքը, Փարիզ, 1929, էջ 37:

REFERENCES

1. Barkhudaryan Vladimir, (Ed.). (2005). Astvatsashnchakan Hayastan. Yerevan: Noyyan Tapan.
2. Khudinyan G.S., Artsakhahayutyan masnakcutyunè18-rd dari verjerin – 19-rd dari skzbnerin Lořium tsavalvats inqhnapashtpanakan marterin` èst haykakan yev otar aghbyurneri, «Artsakhi patmutyan himnaharcery èst skzbnaghbyurneri yev patmagitakan grakanutyan», hodvatsneri zhoghovatsu, Yerevan, 2025, ej 131-150.
3. Sebastatsi Ghukas, Davit Bek kam patmutyun Ghapancvots, Yerevan, 1992, ej 76–77.
4. Frangean E., Mer p‘ilisop‘ayakan ashkharhayeatsk‘è Paris, 1929, ej 37.